1. Սահմանել, որ «Ֆրուֆոյ Արմենիա» հիմնադրամի կողմից ձեռք բերված դյուրակիր համակարգչի ստեղծաշարերը և մալուխները (5 տեղ, 795 կգ ընդհանուր քաշով, 21,558.50 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՍՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի «Ֆրուֆոյ Արմենիա» հիմնադրամի կողմից իրականացվող «ՆՈՒՌ - Նոր ուսումնական ռազմավարություն» ծրագրի մասին» N Մ-866-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱՐԵԿ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1132-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի նոյեմբերի 21-ի N 3/3.8-1/17758-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի նոյեմբերի 25-ի N ՎՄ/3-4/14633-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա և 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՎԻՇՎԱ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02807228) 2013 թվականի նոյեմբերի 6-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետաղական ապրանքների ձեռքբերում՝ 9,326,234 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1133-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N Մ-945-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի նոյեմբերի 22-ի N 3/3.8-1/17829-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի նոյեմբերի 26-ի N ՎՄ/3-4/14690-13 եզրակացությունները, որոշում է.


1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01565354) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 30-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կոմիտաս Վարդապետի թանգարան-ինստիտուտ» մշակութային կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-945-Ա որոշմամբ հաստատված (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-645-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Բարսիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02230504) 2013 թվականի հոկտեմբերի 30-ին կնքված՝ N 02/60 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի ձեռքբերում՝ 5,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Վուդկոաֆտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00440713) 2013 թվականի նոյեմբերի 1-ին կնքված՝ N 1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դռների պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 2,574,300 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1134-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N Մ-945-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (N 1)
(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2013 թվականի դեկտեմբերի 2-ի N 3/3.8-1/18423-13 և Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի նոյեմբերի 29-ի
N ՎՄ/3-4/14928-13 եզրակացությունները, որոշում է.*


1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01565354) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 30-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կոմիտաս Վարդապետի թանգարան-ինստիտուտ» մշակութային կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-945-Ա որոշմամբ հաստատված (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-645-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Էյ Թի Էմ Սի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02576119) 2013 թվականի նոյեմբերի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի ձեռքբերում՝ 6,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Բետ-Մետ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04111977) 2013 թվականի նոյեմբերի 26-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բետոնե արտադրանքի մատակարարում՝ 2,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1135-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱ-
ԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի N Մ-214-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2013 թվականի դեկտեմբերի 2-ի N 3/3.8-1/18338-13 և Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի նոյեմբերի 29-ի
N ՎՄ/3-4/14931-13 եզրակացությունները, որոշում է.*

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-կարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 5-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն - Դիլիջան» ծրագրի մասին» N Մ-214-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արդի կարասի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02239413) 2013 թվականի նոյեմբերի 14-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գրասենյակային սեղանի պատրաստում՝ 280,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-րարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-մուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
6 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1136-Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ի N Մ-917-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության 2013 թվականի նոյեմբերի 28-ի N Ֆ/1 138 գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է**:


1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 1-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Գյուրու ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-917-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

- 1) որոշման 1-ին կետում «1305500000 դրամ» բառերը փոխարինել «1,537,200,000 դրամ» բառերով.
- 2) որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):
2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



Հ Ա Ս Ս Ս Ս Վ Ա Ս Է
«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահի կողմից
«28» նոյեմբեր 2013թ.


«Գյուրու ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում»

Ծ Ր Ա Գ Ի Բ


1.	Ծրագրի նպատակը	Գյուրու «Մուշ-2» բաղամասի 10/5 հասցեում ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հայրերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից
3.	Բարեգործը	Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միություն-ՈՒԵՖԱ, (Ըվեյցարիա, Շվեյցարիա, Բուլղարիա, Իտալիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իսպանիա, Ինգոլստատ, Իտալիա, Իսրայել, Իսրայելական անձանց միություն (ՀՀ ք. Երևան, Խամբյան 27, ՀՎՀՀ 02566915)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրը իրականացվում է Գյուրուի քաղաքում, սպորտի բնագավառում
6.	Ծրագրի բյուջեն	1,537,200,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ ք. Երևան, Խամբյան 27, ՀՎՀՀ 02566915) (Գյուրուի «Մուշ-2» բաղամասի 10/5 հասցեում կառուցվող ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոց)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է կատարել 2011թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2014թ. դեկտեմբեր 31-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Ընդհանուր շինարարական աշխատանքներ՝ 806,835,000 դրամ, 2. Խաղաղաշտերի կառուցում՝ 400,030,000 դրամ, 3. Կահավորում՝ 23,855,000 դրամ, 4. Շինարարական նյութերի, արհեստական խտածածկի, ներքին հարդարման պարագաների և լուսավորության սարքավորումների ներմուծում՝ 306,480,000 դրամ:

15/12/1

<p>10.</p>	<p>Չեղբ բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</p>	<ul style="list-style-type: none"> - մարզադպրոցի կառուցման նախագծի կազմում՝ 5,000,000 դրամ, - գլխավոր մասնաշենքի շինարարական աշխատանքների իրականացում՝ 387,700,000 դրամ, - կաթսայատան կառուցում՝ 14,700,000 դրամ, - էլեկտրական սնուցման ենթակայանի կառուցում՝ 18,000,000 դրամ, - գլխավոր մասնաշենքի էլեկտրատեխնիկական աշխատանքներ՝ 15,700,000 դրամ, - գլխավոր մասնաշենքի տանտեխնիկական աշխատանքներ՝ 6,100,000 դրամ, - գլխավոր մասնաշենքի ջեռուցում և օդափոխության համակարգերի կառուցում՝ 14,000,000 դրամ, - նստարանների մետաղյա կոնստրուկցիաների կառուցում՝ 7,800,000 դրամ, - ոռոգման ամբարի կառուցում՝ 27,535,000 դրամ, - ոռոգման ավտոմատ համակարգերի կառուցում՝ 36,700,000 դրամ, - ցանկապատում և պարսպապատում՝ 73,600,000 դրամ, - շինության հարող տարածքի բարեկարգում և ասֆալտապատում՝ 200,000,000 դրամ: <p>Նախատեսվում է կառուցել նաև մեկ արհեստական խոտածածկով խաղադաշտ՝ 154,140,000 դրամ (որի համար ՖԻՖԱ-ն տրամադրել է 420,000 ԱՄՆ-ի դոլար) և երեք ստանդարտ չափսերի խաղադաշտ՝ 245,890,000 դրամ:</p> <p>Կահավորում 23,855,000 դրամ:</p> <p>Լուսավորության սարքավորումների՝ 51,380,000 դրամ, ինչպես նաև շինանյութի, արհեստական խոտածածկի և ներքին հարդարման պարագաների ներմուծում՝ 255,100,000 դրամ:</p>
<p>11.</p>	<p>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը</p>	<p>Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում</p>
<p>12.</p>	<p>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</p>	<p>Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն Գյումրու բաղաքապետարանի հետ:</p>
<p>13.</p>	<p>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</p>	<p>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը կիրականացվի ՖԻՖԱ-ի (ֆինանսական աուդիտ) և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի հետ</p>



Կազմեց: Ֆինանսական բաժնի պետ Գևորգ Պապիկյան



15/10/17



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1137-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1148-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**


(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի նոյեմբերի 19-ի N 3/3.8-1/17582-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի նոյեմբերի 18-ի N ՎՄ/3-4/14214-13 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության 2013 թվականի հոկտեմբերի 28-ի N Ֆ/1 111 գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 1-ի N Մ-917-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին» N Մ-1148-Ա որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետում «մարզադպրոցի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում» բառերը փոխարինել «մարզադպրոցի կառուցման և մասնակի կահավորման աշխատանքների իրականացում» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1138-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2011 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N Մ-128-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 2-ի N 3/3.8-2/18343-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի նոյեմբերի 29-ի N ՎՄ/3-4/14935-13 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Տաշիր» բարեգործական հիմնադրամի 2013 թվականի նոյեմբերի 21-ի N 232 գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.***


1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մարտի 11-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի Բաղրամյան փողոցի վրա գտնվող հանրապետական հիվանդանոցի նոր մասնաշենքի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-128-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի մայիսի 18-ի N Մ-348-Ա, 2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-097-Ա և օգոստոսի 9-ի N Մ-679-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) ծրագրի 8-րդ կետում «2012 թվականի հունվար» բառերը փոխարինել «2014 թվականի մարտ» բառերով.

2) ծրագրի 9-րդ կետում նշված բոլոր միջոցառումների իրականացման վերջնաժամկետ սահմանել մինչև 2014 թվականի մարտի 31-ը:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1139-Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի N Մ-078-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈ-
ՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի նոյեմբերի 22-ի N 3/3.8-1/17828-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի նոյեմբերի 25-ի N ՎՄ/3-4/14631-13 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի 2013 թվականի նոյեմբերի 18-ի N 52/13 գրությունը, որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 3-ի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն Ա. Ի. Ալիխանյանի անվան Ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամի տիեզերական ճառագայթների բաժանմունքի գործունեությանը» ծրագրի մասին» N Մ-078-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ և 9-րդ կետերում «մինչև 2014թ. հունվարի 1-ը» բառերը փոխարինել «մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ը» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1140-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-950-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**


(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի նոյեմբերի 27-ի N 3/3.8-1/18151-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի նոյեմբերի 25-ի N ՎՄ/3-4/14623-13 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության 2013 թվականի նոյեմբերի 13-ի գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N 1 (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)» N Մ-950-Ա որոշման 1-կետի երկրորդ պարբերությունում «6,755,813 դրամի չափով» բառերը փոխարինել «6,642,425 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1141-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱԿԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ
ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի նոյեմբերի 28-ի N 3/3.8-2/18234-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 4-ի N ԴԴ/22/13420-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի նոյեմբերի 29-ի N ՎՄ/3-4/14932-13 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով Ազգային ինունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված ներարկիչների և դրանց այրման տուփերի (8 տեղ, 1,259 կգ ընդհանուր քաշով, 7,125.36 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1,000 ԱՄՆ-ի դոլար, «ՄՃՓ» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռը համապատասխան բուժհաստատություններին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1142-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱԿԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ
ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 2-ի N 3/3.8-2/18330-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 4-ի N ԴԴ/22/13415-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի նոյեմբերի 29-ի N ՎՄ/3-4/14900-13 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով Ազգային ինոնականիսարգելման ծրագրի շրջանակներում ստացված ախտորոշիչ թեստերի (2 տեղ, 12 կգ ընդհանուր քաշով, 2,780 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 99.70 եվրո, «Ձվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1143-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 19-Ի N Մ-176-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)


*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 3-ի N 3/3.8-1/18551-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի նոյեմբերի 29-ի N ՎՄ/3-4/14912-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.***

1. Սահմանել, որ «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից (քաղ. երևան, Թամանյան 2ա, բն. 2, ՀՎՀՀ՝ 01555988) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-176-Ա որոշմամբ (2012 թվականի նոյեմբերի 30-ի N Մ-946-Ա և 2013 թվականի հոկտեմբերի 4-ի N Մ-860-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պայքար Գրիգորյան» ԱԶ-ի հետ (ՀՎՀՀ՝ 52175959) 2013 թվականի նոյեմբերի 25-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Անի» ծիրանագույն տուֆ քարից և բազալտից ապրանքների մատակարարում՝ 13,928,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1144-Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱ-
ԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-954-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2013 թվականի դեկտեմբերի 2-ի N 3/3.8-1/18341-13 և Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 3-ի
N ՎՄ/3-4/15123-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672)
կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-
ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սիմոնյան» կրթական հիմնա-
դրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական
կենտրոն» ծրագրի մասին» N Մ-954-Ա որոշմամբ (2012 թվականի ապրիլի 27-ի N Մ-302-Ա
որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի
զգալի նշանակություն՝

«Արդի կարասի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02239413) 2013 թվականի հոկտեմբերի 30-ին
կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գրասենյակային կահույքի
պատրաստում՝ 950,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
6 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1145-Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱ-
ԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-954-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (N 1)**
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2013 թվականի դեկտեմբերի 3-ի N 3/3.8-1/18550-13 և Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 4-ի
N ՎՄ/3-4/15158-13 եզրակացությունները, որ ո ղ ու մ է.*


1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտա-սարդական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-954-Ա որոշմամբ (2012 թվականի ապրիլի 27-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Պիկ լիցեյում» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00804437) 2013 թվականի նոյեմբերի 1-ին կնքված՝ N 12/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեռուստացույցի կախիչի պատրաստման աշխատանքների իրականացում՝ 64,750 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Պիկ լիցեյում» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00804437) 2013 թվականի նոյեմբերի 1-ին կնքված՝ N 13/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեռուստացույցի տակդիրի պատրաստման աշխատանքների իրականացում՝ 39,920 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Պիկ լիցեյում» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00804437) 2013 թվականի նոյեմբերի 1-ին կնքված՝ N 15/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կենտրոնական մուտքի համար հովանոցի պատրաստման աշխատանքների իրականացում՝ 904,590 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1146-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N Մ-565-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2013 թվականի դեկտեմբերի 3-ի N 3/3.8-1/18548-13 և Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 5-ի
N ՎՄ/3-4/15159-13 եզրակացությունները, որոշում է.*

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-
ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի
կողմից իրականացվող «Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգու վերանորոգման,
վերակառուցման և պահպանման» ծրագրի մասին» N Մ-565-Ա որոշմամբ (2012 թվականի
հունիսի 8-ի N Մ-407-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման
հետև և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պիկ լիցեյում» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00804437) 2013 թվականի նոյեմբերի 1-ին
կնքված N 14/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բասկետբոլի
խաղադաշտի շարժական կանգնակների ձևափոխման աշխատանքների իրականացում՝
361,020 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1147-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱ-
ԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի N Մ-214-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N 1)
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 3-ի N 3/3.8-1/18546-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N ՎՄ/3-4/15157-13 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 5-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն - Դիլիջան» ծրագրի մասին» N Մ-214-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սոֆթ թայմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02608299) 2013 թվականի նոյեմբերի 14-ին կնքված՝ N141113 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային ծրագրերի արտոնագրերի ձեռքբերում՝ 995,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1148-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱ-
ԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի N Մ-214-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N 2)
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 3-ի N 3/3.8-1/18544-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 2-ի N ՎՄ/3-4/14984-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 5-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն - Դիլիջան» ծրագրի մասին» N Մ-214-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԷֆէմՁեթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00856942) 2013 թվականի նոյեմբերի 5-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային ստեղծագործությունների ձեռքբերում՝ 660,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1149-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 17-Ի N Մ-347-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱ-
ՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**


(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2013 թվականի դեկտեմբերի 3-ի N 3/3.8-1/18506-13 և Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի նոյեմբերի 29-ի
N ՎԱ/3-4/14929-13 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Սիմոնյան» կրթական հիմնա-
դրամի 2013 թվականի նոյեմբերի 26-ի գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 17-ի «Հայաստանի Հանրապետու-
թյան կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011
թվականի հուլիսի 22-ի N Մ-565-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի
մասին N 1 («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» N Մ-347-Ա որոշման 1-ին կետի 2-րդ
պարբերությունում «38079513 դրամի չափով» բառերը փոխարինել «38,892,293 դրամի
չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար-
ություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵՂՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 դեկտեմբերի 2013 թվականի N ՍՄ- 1150 -Ա
քաղ. Երևան**

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱՆԱՑՎՈՂ «ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 2-ի N 3/3.8-1/18434-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 4-ի N 02/7268-13, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2013 թվականի նոյեմբերի 29-ի N 01/07.1/14280-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի նոյեմբերի 29-ի N ՎՄ/3-4/14937-13 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 65,200,000 դրամ արժողությամբ «Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված (քաղ. Երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115)՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայֆուսագապարդ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի հուլիսի 7-ին կնքված N 015.08 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բնական գազի մատակարարում՝ 2,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2006 թվականի հունիսի 1-ին կնքված N 07-0125-22 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի


1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Սարգսյանի կողմից 2013թ

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից 2014-2015 թ. իրականացվող զրուցության և կրթության հայկական ազգային հիմնադրամի (ԳՀԱՀ) հիմնադրամի

Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

1. Ծրագրի նպատակը	ՀՀ գիտության զարգացմանը նպաստելու նպատակով գիտական դրամաշնորհների տրամադրում ՀՀ գիտնականներին և գիտական խմբերին
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում և խրախուսում («Բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 15-րդ հոդված):
3. Բարեգործը	ԱՄՆ-ի Հայ Օգնության ֆոնդ (Նյու Յորքի գրասենյակ)
4. Ծրագիրը կատարողը	ԱՄՆի ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան, Մ. Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ, ՀՀ ԳԱԱ գիտահետազոտական ինստիտուտներ, ՀՀ ԿԳ նախարարության ենթակայության տակ գործող, ՀՀ Կառավարությանն առընթեր և այլ գերատեսչական պատկանելիություն ունեցող գիտական և կրթական հիմնարկներ: Բնագավառը՝ գիտություն և կրթություն
6. Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 65 200 000 դրամ: Այդ թվում դրամաշնորհների գումարը 60 000 000 դրամ: Կազմակերպական ծախսեր 5 200 000 դրամ: Մեկ դրամաշնորհի գումարը կազմում է 5 000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Միջոցները ստացվելու են ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակից:
7. Բարեգործություն ստացողը	ՀՀ գիտական և կրթական հիմնարկներ, գիտնականներ: Ընդամենը 30 գիտական խմբեր, Ընդհանուրը՝ 120 գիտնականներ:
8. Ծրագրի իրականացման տևողությունը	01.01.2014 – 30.01.2015
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	ԱՄՆ-ի ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղի կողմից ՀՀ թերթերում տպագրված հայտարարության հիման վրա մրցույթի կազմակերպում: Մրցույթի հայտարարումից հետո մասնակիցները էլ. փոստով, անգլերեն լեզվով գրված իրենց աշխատանքները ուղարկում են Նյու Յորքում գտնվող դրամաշնորհի անցկացման կազմ. կոմիտեին(Հետազոտական խորհրդին), որը համապատասխան

	մասնագիտությունների առաջատար գիտնականներին և ներկայացնում առաջադրված աշխատանքները: Համադրելով տարբեր գիտնականների եզրակացությունները գիտական խմբերի աշխատանքների վերաբերյալ հայտարարվում են մրցույթի հաղթողները: Դրամաշնորհի հաղթողները ճանաչվելուց հետո ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղը պայմանագրեր է կնքում նրանց հետ և վերահսկում պայմանների կատարումը: Գիտական ծրագրերի իրականացման ժամանակ ՀՕՖ-ի մոնիթորինգի համեմատողովը տարիք 2 ամսանոց պայքեր է կատարում գիտական խմբեր ընթացքին ծանոթանալու նպատակով: Ծրագրի 1-ին փուլ. 01.01.2014թ. – 01.07.2014թ. Ծրագրի 2-րդ փուլ. 01.07.2014թ. – 30.01.2015թ. Դրամաշնորհի առաջին կեսը տրվում է հունվար 2014թ. գումարի երկրորդ կեսը՝ առաջին փուլի ավարտին /հուլիս, 2014թ./: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 65 200 000 ՀՀ դրամ:
10. Ձեռք բերվող (ներմուծվող) արդյունքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ակնկալում ենք օգտագործված գազի դիմաց 01.01.2014 - 31.12.2014թ թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 2 500 000 դրամի չափով՝ պայմանագիր N 015 08.13.1511, կնքված 07.07.2013 թ «Հայմուսգազարդ» ՓԲԸ-ի (Երևանի ԳԳՄ, ՀՀ, ք. Երևան, Չարենցի 141ա, ՀՎՀՀ 00046317) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք. Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև: Ակնկալում ենք օգտագործված ջրի դիմաց 01.01.2014 - 31.12.2014 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 800 000 դրամի չափով՝ պայմանագիր N 07-0125-22, կնքված 01.06.06 «Երևան Զուր» ՓԲԸ-ի (Երեվան 0025, Աբովյան 66ա, ՀՎՀՀ 01555351) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք. Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի սպասարկման համար ծախսվելու է այդ թվում 5 200 000 ՀՀ դրամ, ընդհանուր արժողության 7.97 %: Ծրագրի սպասարկումը ներառում է ծրագրի ղեկավարի աշխատավարձ 1 200 000 կապի ծառայություններ 500 000 կոմունալ ծախսեր 3 300 000 տպագրական ծախսեր 200 000
12. Համադրման կետերը՝ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ ԳԱԱ, ՀՀ Կրթության և գիտության նախարարություն, և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող համեմատողով:
13. Ծրագրի այլուց նախատեսված նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է ԱՄՆի ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակի, իսկ եռամսյա և տարեկան հաշվետվությունների միջոցով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող համեմատողովի կողմից:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՐՈՒԿԱԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1151 -Ա
քաղ. երևան

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԿՐԹԱՎՃԱՐՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 2-ի N 3/3.8-1/18422-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 4-ի N 02/7272-13, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2013 թվականի նոյեմբերի 29-ի N 01/07-2/14284-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի նոյեմբերի 29-ի N ՎՄ/3-4/14933-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է:

1. Բարեգործական որակելի Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 104,354,000 դրամ արժողությամբ «Կրթավճարներ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված (քաղ. երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115)՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն:

1) «Յուզոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2012 թվականի նոյեմբերի 1-ին կնքված N 177/01/11/2012 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 3,700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Հարավ» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի մարտի 18-ին կնքված N 230174 պայմանագրում նշված գործարքը,

որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 2,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3) «ՓրայստրեթիաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02588296) 2013 թվականի ապրիլի 29-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը հաշվապահական հաշվառման ծառայությունների մատուցում՝ 5,244,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկանսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Սարգսյանի կողմից 2014 թ. հրականացվող Կրթավճարների 2013 թ. հաշիվների 2014 թ. հրականացվող Կրթավճարների

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից 2014 թ. հրականացվող Կրթավճարների Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է աջակցել հանրապետության պետական և մասնավոր բարձրագույն հաստատություններում, քոլեջներում ու միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությունների գծով ուսուցանվող, սոցիալապես անապահով և անվճարունակ ուսանողներին՝ կրթավճար և կրթաթոշակ տրամադրելու միջոցով: Վերը նշված կրթական հաստատությունների ցանկը տրվում է սույն ծրագրին կից ցուցակում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Անկկալում ենք ԱԱՀ-ից ազատում և խրախուսում («Բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 15-րդ հոդված):
3.	Բարեգործը	ԱՄՆ-ի Հայ Օգնության Ֆոնդ (Նյու Յորքի գրասենյակ), ամերիկահայ բարերարներ՝ Աննու Մաթևոսյան, Ժիրայր Նիշանյան, Հարություն Գուլամիրյան, Մարգարիտ Աճեմյան, Էդուարդ Մարդիգյան
4.	Ծրագիրը կատարողը	ԱՄՆի ԳՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան, Մ. Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ ՀՀ մարզեր և ք. Երևան: Բնագավառը՝ կրթական:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 104 354 000 ՀՀ դրամ: Տարեկան ուսման վարձը կազմում է 76 410 000 ՀՀ դրամ: Տարեկան կրթաթոշակը 14 250 000 ՀՀ դրամ: Կազմակերպական ծախսեր 13 694 000 ՀՀ դրամ
7.	Բարեգործություն ստացողը	1. Երևանի առաջնակարգ ԲՈՒՀ-երի բակավարձատու, մագիստրատուրայում և կլինիկական օրդինատուրայում սովորող 129 ուսանողներ: 2. Ծագումով Գեղարքունիքի մարզից 58 ուսանող, որ սովորում են Գավառի պետական համալսարանում և Երևանի ճարտարապետության և շինարարության

		պետական համալսարանում: 3. ք. Երևանի, ք. Վանաձորի և ք. Գավառի մանկատների կողմից երաշխավորված, ուսումը շարունակելու ցանկություն հայտնած մանկատների 71 ներկա և նախկին սաներ: 4. Տավուշի մարզի բարձրագույն, արհեստագործական, միջնակարգ մասնագիտական կրթություն ստացող թվով 32 ուսանողներ: Ընդհանուրը՝ 290 ուսանողներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	01.01.2014 – 31.12.2014
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Կրթավճարների տրամադրման մրցույթների մասին հայտարարությունների տարածում ՀԱՄ-ների միջոցով /թերթեր, ռադիո, հեռուստակայաններ/: (մայիս - հունիս 2014) 2. Մրցույթների մասին հայտարարությունների տարածում վերոնշյալ բուհերում՝ հայտարարությունները փակցնելու միջոցով: (ընդունող համաձայնագրերի 2014 թ. աշխատանքի մեկնարկին) 3. Փաստաթղթային փաթեթների անհրաժեշտ քանակի պատճենահանում, տարածում բուհերում, այլ կրթօջախներում: (մայիս-հունիս 2014) 4. Դիմորդների կողմից լրացված փաթեթների հավաքում: (օգոստոս 2014) 5. Փաթեթների դիտարկում, նախնական ընտրություն: (օգոստոս 2014) 6. Բոլոր դիմորդների տնայցեր: (օգոստոս 2014) 7. Մասնագիտական կողմնորոշման աշխատանքների կազմակերպում մանկատների: ԳՕՖ-ի կրթական ծրագրերի համակարգող խորհրդի միստի աշխատանքների կազմակերպում՝ վերջնական ընտրություն կատարելու նպատակով: օգոստոս-սեպտեմբեր 2014 8. Հաղթողների ընտրություն: սեպտեմբեր 2014 9. Մրցույթների արդյունքների մասին տեղեկացում – հաղթողների ցուցակները փակցվում են ԳՕՖ-ում: (սեպտեմբեր 2014) 10. Կողմնորոշման հանդիպումներ մրցույթներում հաղթող ճանաչված ուսանողների հետ, պայմանագրերի ստորագում: (ուս տարվա ընթացքում) 11. Կրթավճարների փոխանցում համապատասխան բուհեր /տարեկան երկու անգամ/: (յուրաքանչյուր կիսամյակի սկզբին) 12. Ամենամյա կրթաթոշակների վճարում ուսանողներին: (յուրաքանչյուր ամիս) 13. Բուհերի հետ մշտական կապի պահպանում՝ ուսանողների ակադեմիական առաջադիմությանը հետևելու նպատակով: (ուս. տարվա ողջ ընթացքում) 14. Ամեն կիսամյակի ավարտից հետո ստուգման զրբույթների պատճենների հավաքում և դիտարկում: (յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո)



15/4

		<p>15. Առաջադիմության արդյունքները ուսումնասիրելու նպատակով Կրթական ծրագրի համակարգող խորհրդի նիստերի գումարում: (յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո)</p> <p>16. Ուսանողների մասնակցությամբ բարեգործական միջոցառումների կազմակերպում: (ուս տարվա ընթացքում)</p> <p>17. Ծրագրի ընկալման ընթացքն ապահովելու համար անհրաժեշտ այլ միջոցառումների կազմակերպում կամ քայլերի ձեռնարկում: (ուս տարվա ընթացքում)</p> <p>Կրթավճարները տրամադրվում են մրցութային կարգով մասնակցության և ընտրության երկու հիմնական չափանիշների հիման վրա՝ դիմորդի ընտանիքի արքատության ցուցանիշը և դիմորդի ակադեմիական առաջընթացը: Կրթավճարները տրամադրվում են բակալավրիատում կամ այլ կրթական հաստատությունում ուսումնառության ողջ ընթացքում: Ծրագրին մասնակցությունը կասեցվում է, եթե տարիների ընթացքում փոփոխվել է ընտանիքի սոցիալական վիճակը կամ ուսանողը թերաճում է ուսման մեջ և չի կատարում իր պարտավորությունները: Նման դեպքերում ոչ բավարար առաջադիմություն ունեցող ուսանողի փոխարեն ընտրվում է նորը՝ ելնելով վերոնշյալ չափանիշներից: Յուրաքանչյուր ամիս 7000-ական դրամ կրթաթղթակ է տրամադրվում ծրագրերում ընդգրկված մանկատան սան կամ շրջանավարտ ուսանողներին, Գավառի պետական համալսարանում, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում սովորող ուսանողներին՝ բարերարների ցանկությամբ: Գումարը նախատեսված է ուսումնական նյութերի պարծենահանման, գրեմական պիտույքների և դասագրքերի ձեռքբերման կամ տրանսպորտային ծախսերը հոգալու համար:</p> <p>Դիմորդների և ուսանողների ընտանիքների սոցիալական վիճակի մասին տեղեկությունները հավաքագրվում են համապատասխան հարցաթերթիկի միջոցով և այնուհետև ճշտվում նրանցից յուրաքանչյուր ընկալման այցելության ընթացքում: Մրցույթի արդյունքները ամփոփվում են կրթական ծրագրերի համեմատողովի նիստերի ընթացքում: Հանձնաժողովի անդամներ են ՀՕՖ աշխատակիցները, ծրագրերի համակարգողները, բարերարների ներկայացուցիչները և ՀՕՖ կրթական ծրագրերի շահառուները կրթաթղթակառուները:</p> <p>Ծրագրի ընդհանուր արժեքն է 104 354 000 ՀՀ դրամ:</p>
10.	Չեղք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	<p>Ակնկալում ենք էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների համար 01.01.2014 - 31.12.2014 թվականի ընթացքում ԱԱԴ-ից ազատում 3 700 000 դրամի չափով՝ պայմանագիր 177/01/11/2012 կնքված 01.11.2012թ. «Յուքում» ՍՊԸ-ի, (ք. Երևան, Տեղյան 19, բն 4, ՀՎՀՀ 0024873) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:</p>

15/4

		<p>Ակնկալում ենք օգտագործված էլեկտրաէներգիայի դիմաց 01.01.2014 - 31.12.2014 թվականի ընթացքում ԱԱԴ-ից ազատում 2 000 000 դրամի չափով՝ պայմանագիր 230174, կնքված 18.03.08թ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» Փ.Բ.Ը.Հարավ մասնաճյուղի (ք. Երևան, Արշակունյաց 17ա, ՀՎՀՀ 01520882) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:</p> <p>Ակնկալում ենք հաշվապահական ծառայությունների համար 01.01.2014 - 31.12.2014 թվականի ընթացքում ԱԱԴ-ից ազատում 5 244 000 դրամի չափով՝ հաշվապահական հաշվառման ծառայությունների մատուցման նամակ-համաձայնագիր N FAAS/03/13 կնքված 29.04.2013թ. «ՓրայստոթերիաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ-ի (ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1 թիվ 17/1, ՀՎՀՀ 02588296) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:</p>												
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	<p>Ծրագրի սպասարկման համար ծախսվելու է 13 694 000 ՀՀ դրամ ծրագրի ընդհանուր արժողության 13,12%-ը: Ծրագրի սպասարկումը ներառում է՝</p> <table border="0"> <tr> <td>ծրագրի ղեկավարի աշխատավարձ</td> <td>1 800 000</td> </tr> <tr> <td>կապի ծառայություններ</td> <td>3 700 000</td> </tr> <tr> <td>կոմունալ ծախսեր</td> <td>2 000 000</td> </tr> <tr> <td>տրանսպորտային ծախսեր</td> <td>700 000</td> </tr> <tr> <td>հաշվապահական ծառայություններ</td> <td>5 244 000</td> </tr> <tr> <td>տպագրական ծախսեր</td> <td>250 000</td> </tr> </table>	ծրագրի ղեկավարի աշխատավարձ	1 800 000	կապի ծառայություններ	3 700 000	կոմունալ ծախսեր	2 000 000	տրանսպորտային ծախսեր	700 000	հաշվապահական ծառայություններ	5 244 000	տպագրական ծախսեր	250 000
ծրագրի ղեկավարի աշխատավարձ	1 800 000													
կապի ծառայություններ	3 700 000													
կոմունալ ծախսեր	2 000 000													
տրանսպորտային ծախսեր	700 000													
հաշվապահական ծառայություններ	5 244 000													
տպագրական ծախսեր	250 000													
12.	Հրահանգավորությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	<p>Սույն ծրագրի իրականացման շրջանակներում ՀՕՖ-ը համագործակցում է՝</p> <ol style="list-style-type: none"> 1. ՀՀ Կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի 2. ՀՀ Կրթության և գիտության, ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունների, 3. Բոլոր վերը նշված կրթօջախների 4. Մանկատների 5. ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարության զբաղվածության կենտրոնի 6. ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարության զբաղվածության կենտրոնի երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոնի 7. Տեղական ինքնակառավարման մարմինների 8. Վերոնշյալ ոլորտում գործող այլ տեղական և արտասահմանյան ոչ կառավարական կառույցների 												
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	<p>Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակի, ծրագրի հովանավորների՝ Անուշ Մաթևոսյանի, Ժիրայր Լիշանյանի, Մարգարիտ Աճեմյանի, Էդուարդ Մարդիգյանի, Գուլամբերյան ընտանիքի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից եռամսյա և տարեկան հաշվետվությունների միջոցով:</p>												



15/4



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1152 -Ա
քաղ. Երևան**

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱԾՅՈՒՂԻ
ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾԱՇԱՐԱՆՆԵՐ» ԾՐԱԳՐԻ
ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 2-ի N 3/3.8-1/18424-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 4-ի N 02/7270-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի նոյեմբերի 29-ի N ՖԲ/ԱնՄ-5/9061-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի նոյեմբերի 29-ի N ՎՄ/3-4/14936-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակելի Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 70,490,000 դրամ արժողությամբ «Բարեգործական ճաշարաններ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված (քաղ. Երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115)՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝


1) «Մեղտեխնիկա պլուս» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01502333) 2012 թվականի նոյեմբերի 29-ին կնքված պայմանագրում նշված գործարքը (2012 թվականի նոյեմբերի 12-ի համաձայնագրի խմբագրությամբ), որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը վարձակալության ծառայությունների մատուցում՝ 3,660,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Դանինի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00869016) 2012 թվականի նոյեմբերի 29-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը սննդի և հիգիենիկ պարագաների մատակարարում՝ 21,310,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Շարա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05505594) 2012 թվականի դեկտեմբերի 6-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը սննդի և հիգիենիկ պարագաների մատակարարում՝ 17,300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Սարգսյանի կողմից
 «ՀԵՄ»-ի կողմից 2013թ.


Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից 2014 թ. իրականացվող **Բարեգործական ճաշարաններ**

Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Վ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

1. Ծրագրի նպատակը	«Բարեգործական ճաշարաններ» ծրագրի նպատակն է նպաստել սոցիալական լարվածության մեղմացմանը մայրաքաղաքում և հանրապետության այլ քաղաքներում՝ Գյումրի, Բերդ, սոցիալապես անապառվ խավերին /միայնակ տարեցներ, հաշմանդամներ, գործազուրկներ/ ամենօրյա կալորեական տաք կերակուրով ապահովելու միջոցով:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ամերիկայի ՀՕՖ-ի կողմից իրականացվող «Բարեգործական ճաշարաններ» բարեգործական ծրագրի շրջանակներում նախատեսվող սննդամթերքի, լվացքի և հիգիենիկ պարագաների գնում, կապ, կոմունալ կենցաղային, տարածքի և պահեստի վարձակալության համար ակնկալում ենք ԱՄՀ-ից ազատում 01.01.2014 թվականից մինչև 31.12.2014 թվականը:
3. Բարեգործը	ԱՄՆ - Հայ օգնության ֆոնդ, ԱՄՆ-ի Սան-Ֆրանցիսկոյի «Հայաստանի բարեկամներ» կազմակերպություն, Երևան Լիզան Արմենիայի
4. Ծրագիրը կատարողը	Ամերիկայի ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան, Մ. Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը ք. Երևան, ք. Բերդ, ք. Գյումրի: Բնագավառը՝ սոցիալական
6. Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 70,490,000.00 ՀՀ դրամ:
7. Բարեգործություն ստացողը	ք. Երևանի 1 բարեգործական ճաշարան՝ 180 շահառու, ք. Բերդի բարեգործական ճաշարան՝ 120 շահառու, ք. Գյումրիի բարեգործական ճաշարան՝ 200 շահառու, բարեգործական ճաշարաններ այցելող 500 կարիքավորներ և ծերեր, որոնք ընտրվում են տեղական սոցիալական ծառայությունների հետ համագործակցելով: Գյումրի բարեգործական ճաշարանում բարեգործի ցանկությամբ տրվում է նաև հագուստ և հիգիենիայի պարագաներ: Ծրագիրն ամբողջությամբ իրականացվում է անվճար:
8. Ծրագրի իրականացման տևողությունը և/կամ սկիզբը, ավարտը	01.01.2014 – 31.12.2014
9. Միջոցառումների նկարագրությունը և	Տեղական սոցիալական ծառայությունների հետ համաձայնեցված ցուցակներով՝ 2014

15/5

Ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը, շաբաթական 5 օր, օրական 1 անգամ տաք կերակուրի մատուցում կարիքավորներին և ծերերին: Ծրագիրը իրականացվելու է տեղական սոց. ծառայությունների հետ կազմված ցուցակներով						
	Անվանում	Մարտի	Ապրիլ	1 եռամսյակ	2 եռամսյակ	3 եռամսյակ	4 եռամսյակ
Ք. Երևան (տեղ. տրք համայնք)		180					
սնունդ և հիգիենիկ պարագաներ		12,810,000.00	3,202,500.00	3,202,500.00	3,202,500.00	3,202,500.00	
Էլեկտրաէներգիա		984,000.00	246,000.00	246,000.00	246,000.00	246,000.00	
աշխատավարձ ը/Ֆ. անձնակազմի		2,988,000.00	747,000.00	747,000.00	747,000.00	747,000.00	
Ընդամենը		16,782,000.00	4,195,500.00	4,195,500.00	4,195,500.00	4,195,500.00	
Ք. Բերդ		120					
սնունդ և հիգիենիկ պարագաներ		8,500,000.00	2,125,000.00	2,125,000.00	2,125,000.00	2,125,000.00	
Էլեկտրաէներգիա		600,000.00	150,000.00	150,000.00	150,000.00	150,000.00	
աշխատ. վարձ ը/Ֆ. անձնակազմի		1,992,000.00	498,000.00	498,000.00	498,000.00	498,000.00	
Ընդամենը		11,092,000.00	2,773,000.00	2,773,000.00	2,773,000.00	2,773,000.00	
Ք. Գյումրի		200					
սնունդ և հիգիենիկ պարագաներ		17,300,000.00	4,325,000.00	4,325,000.00	4,325,000.00	4,325,000.00	
Շահատուներին բաղնիքի սպասարկում		2,600,000.00	650,000.00	650,000.00	650,000.00	650,000.00	
Էլեկտրաէներգիա, ջուր		1,100,000.00	280,000.00	270,000.00	265,000.00	275,000.00	
աշխատավարձ ը/Ֆ. անձնակազմի		3,720,000.00	930,000.00	930,000.00	930,000.00	930,000.00	
վարձավճար		2,160,000.00	540,000.00	540,000.00	540,000.00	540,000.00	
Ընդամենը		26,880,000.00	6,735,000.00	6,715,000.00	6,710,000.00	6,720,000.00	
Պահեստի վարձակալություն		3,860,000.00	915,000.00	915,000.00	915,000.00	915,000.00	
Ընդամենը ծրագրային ծախսեր		58,414,000.00	14,618,500.00	14,598,500.00	14,593,500.00	14,603,500.00	
Կազմակերպական ծախսեր							
աշխատավարձ		10,690,000.00	2,672,500.00	2,672,500.00	2,672,500.00	2,672,500.00	
տրամադրոտ		966,000.00	241,500.00	241,500.00	241,500.00	241,500.00	
գրասենյակային ծախսեր		420,000.00	105,000.00	105,000.00	105,000.00	105,000.00	
Ընդամենը		12,076,000.00	3,019,000.00	3,019,000.00	3,019,000.00	3,019,000.00	
Ընդհանուրը		500	70,490,000.00	17,637,500.00	17,617,500.00	17,612,500.00	17,622,500.00



15/5

	<p>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 70,490,000.00 ՀՀ դրամ: Շահառուների ընդհանուր թիվը՝ 500 մարդ</p>
<p>10 Ձեռք բերվելիք ապրանքների, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը</p>	<p>Ակնկալում ենք պահեստի վարձակալության համար 01.01.2014 - 31.12.2014 թվականի ընթացքում ԱԱԴ-ից ազատում 3 660 000 դրամի չափով՝ պայմանագիր կնքված 26.11.2008թ «Սեդտեխնիկա պլուս» ՓԲԸ-ի (ՀՀ, ք. Երևան, Ս. Հերացու 7, ՀՎՀՀ 01502333) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք. Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:</p> <p>Ակնկալում ենք շահառուների համար ձեռք բերվող սննդի և հիգենիկ պարագաների համար 01.01.2014 - 31.12.2014 թվականի ընթացքում ԱԱԴ-ից ազատում 21 310 000 դրամի չափով՝ պայմանագիր կնքված 29.11.2012թ «Դանիմի» ՍՊԸ-ի (ՀՀ, ք. Երևան, Խուդյակովի 177/1, ՀՎՀՀ 00869016) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք. Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:</p> <p>Ակնկալում ենք շահառուների համար ձեռք բերվող սննդի և հիգենիկ պարագաների համար 01.01.2014 - 31.12.2014 թվականի ընթացքում ԱԱԴ-ից ազատում 17 300 000 դրամի չափով՝ պայմանագիր կնքված 06.12.2012թ «Շարա» ՍՊԸ-ի (ՀՀ, ք. Գյումրի, 26 Կոմիտասների 133, ՀՎՀՀ 05505594) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք. Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:</p>
<p>11 Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր</p>	<p>Ծրագրի սպասարկման համար ծախսվելու է 12,076,000.00 ՀՀ դրամ, որն ընդհանուր ծրագրի 17.13% է: Ծրագրի սպասարկումը ներառում է ճաշարանների աշխատանքների վերահսկողություն ՀՕՖ-ի աշխատակիցների կողմից, տրանսպորտային ծախսեր, հանդիպումներ տեղ. ինքնակառավարման մարմինների հետ, գրասենյակային ծախսեր:</p>
<p>12 Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</p>	<p>Իրականացման ընթացքում կազմակերպությունն համագործակցում է՝ ՀՀ Աշխատանքի և սոցալ. նախարարության, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ՀՀ Կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի հետ:</p>
<p>13 Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</p>	<p>Վերահսկողությունը կատարվելու է Ամերիկայի ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակի կողմից: Եռամսյա և տարեկան հաշվետվությունների միջոցով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից:</p>

15/5



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1453 -Ա
քաղ. երևան**

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒԴԻ
ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ «ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐԱՉՈՒՐԿ ԵՐԵՒԱ-
ՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 2-ի N 3/3.8-1/18421-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 4-ի N 02/7269-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 2-ի N ՖԲ/ԱՆՄ-4/9115-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի նոյեմբերի 29-ի N ՎՄ/3-4/14934-13 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակելի Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 108,100,000 դրամ արժողությամբ «Հայաստանի հայրագուրկ երեխաների օգնություն» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված (քաղ. երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115)՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2006 թվականի նոյեմբերի 28-ին կնքված N 2939 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բջջային կապի ծառայությունների մատուցում՝ 2,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2006 թվականի նոյեմբերի 28-ին կնքված՝ N 010957156 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի

հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930093) 2013 թվականի հունիսի 18-ին կնքված՝ N ID 1604 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ինտերնետային կապի ծառայությունների մատուցում՝ 500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Ֆլեշ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2011 թվականի նոյեմբերի 14-ին կնքված՝ N 131/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ավտոմեքենայի վառելիքի ձեռքբերում՝ 4,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշման ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ու Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Սարգսյանի կողմից

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից 2014 թ. իրականացվող հայրազուրկ երեխաներին աջակցության

Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Ծրագիրը նպատակն է Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի Տիկմանց միության աջակցությամբ օգնել ՀՀ մարզերի և Ջավախքի հայրազուրկ երեխաներին՝ տարեկան երկու անգամ տրամադրելով դրամական հատկացումներ, մեղմել սոցիալական լարվածությունը և նպաստել աղքատության կրճատմանը: Ծրագրով նախատեսվում է նաև ամառային հանգստի կազմակերպում այդ երեխաների համար: Ներկայումս ծրագրում ընդգրկված են 1050 երեխաներ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում և խրախուսում («Բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 15-րդ հոդված):
3.	Բարեգործը	ԱՄՆ-ի Հայ Օգնության Ֆոնդ (Նյու Յորքի գրասենյակ), Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի Տիկմանց միություն, ամերիկահայ ընտանիքներ:
4.	Ծրագիրը կատարողը	ԱՄՆի ՀՅԾ-ի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան, Մ. Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ ՀՀ մարզեր և Ջավախք: Բնագավառը՝ սոցիալական:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 108 100 000 ՀՀ դրամ: Որից՝ դրամական օգնություն է 86 100 000 ՀՀ դրամ, ճամբարային հանգստի կազմակերպում 8 500 000 ՀՀ դրամ, կազմակերպական ծախսեր 13 500 000 ՀՀ դրամ
7.	Բարեգործություն ստացողը	1. Հայաստանի մարզերում և Ջավախքում բնակվող 1050 հայրազուրկ մինչև 18 տարեկան երեխաներ՝ Սյունիքի մարզից 249, Ծիրակի մարզից 75, Տավուշի մարզից 55, Արարատի մարզից 338, Արմավիրի մարզից 48, Արագածոտնի

2

		մարզից 47, Կոտայքի մարզից 93, Գեղարքունիքի մարզից 69, և Ջավախքից 76 երեխաներ: Յուրաքանչյուր տարի ամառային ճամբարում իրենց հանգիստն են անցկացնում 10-15 տարեկան 80 երեխաներ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	01.01.2014 – 31.12.2014
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Դրամական օգնության տրամադրում յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ՝ 100 ԱՄՆ դոլարի համարժեք դրամ: Ընդհանուր գումարը 86 100 000 ՀՀ դրամ: 2. Ճամբարային հանգստի կազմակերպում 80 երեխաների համար՝ հուլիս-օգոստոս ամիսներին: Ընդհանուր գումարը 8 500 000 ՀՀ դրամ: 3. Հայ Առաքելական Եկեղեցու թեմերի հոգևոր սպասավորների հետ համատեղ շահառու երեխաների մկրտության արարողությունների իրականացում: Ծախսեր չեն նախատեսվում: Շահառուների ընտրությունը կատարվում է նրանցից ստացված դիմումների հիման վրա՝ համագործակցելով տեղական իշխանությունների և եկեղեցու թեմերի հետ, ինչպես նաև տնայցերի հիման վրա: Կազմակերպական ծախսեր՝ 13 500 000 ՀՀ դրամ: Ծրագրի ընդհանուր արժեքն է 108 100 000 ՀՀ դրամ:
10.	Չենք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ակնկալում ենք բջջային հեռախոսակապի ծառայությունների համար 01.01.2014 - 31.12.2014 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 2 000 000 դրամի չափով՝ պայմանագիր N 2939 կնքված 28.11.06թ «Արմենտել» ՀՀ ՓԲԸ-ի (ք. Երևան, Մխարրյան 2, ՀՎՀՀ 02500052) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք. Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև: Ակնկալում ենք հեռախոսակապի ծառայությունների համար 01.01.2014 - 31.12.2014 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 500 000 դրամի չափով՝ պայմանագիր N 010957156 կնքված 28.11.06թ «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ի (ք. Երևան, Մխարրյան 2, ՀՎՀՀ 02500052) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք. Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև: Ակնկալում ենք էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների համար 01.01.2014 - 31.12.2014 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 500 000 դրամի չափով՝ պայմանագիր N ID 1604 կնքված 18.06.2013թ «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ի (ք. Երևան 0012, Գրայա Քոչար 13/1, ՀՎՀՀ 00930093) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք. Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ

		<p>02517115) միջև:</p> <p>Ակնկալում ենք ավտոմեքենայի վառելիքի ձեռք բերման համար 01.01.2014 - 31.12.2014 թվականի ընթացքում ԱԱԳ-ից ազատում 4 000 000 դրամի չափով՝ պայմանագիր 131/11, կնքված 14.11.11թ «Ֆլեշ» ՍՊԸ-ի (ք. Երևան, Կողբացու 30, ՀՎՀՀ 01808789) և Ամերիկայի Հայ օգնության ֆունդի Հայաստանի մասնաճյուղի (ՀՀ, ք. Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:</p>															
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	<p>Ծրագրի սպասարկման համար ծախսվելու է 13 500 000 ՀՀ դրամ՝ ծրագրի ընդհանուր արժողության 12.49 %-ը: Ծրագրի սպասարկումը ներառում է</p> <table border="0"> <tr> <td>ծրագրի ղեկավարի աշխատավարձ</td> <td>2 100 000 ՀՀ դրամ</td> <td></td> </tr> <tr> <td>կապի ծառայություններ</td> <td>3 000 000 ՀՀ դրամ</td> <td></td> </tr> <tr> <td>գրասենյակային սարքավորումներ և կահույք</td> <td>3 000 000 ՀՀ դրամ</td> <td></td> </tr> <tr> <td>գրասենյակային ծախսեր</td> <td>600 000 ՀՀ դրամ</td> <td></td> </tr> <tr> <td>տնայցերի հետ կապված ծախսեր</td> <td>4 800 000 ՀՀ դրամ</td> <td>(այդ թվում բեռնափոխ 4 000 000 ՀՀ դրամ)</td> </tr> </table>	ծրագրի ղեկավարի աշխատավարձ	2 100 000 ՀՀ դրամ		կապի ծառայություններ	3 000 000 ՀՀ դրամ		գրասենյակային սարքավորումներ և կահույք	3 000 000 ՀՀ դրամ		գրասենյակային ծախսեր	600 000 ՀՀ դրամ		տնայցերի հետ կապված ծախսեր	4 800 000 ՀՀ դրամ	(այդ թվում բեռնափոխ 4 000 000 ՀՀ դրամ)
ծրագրի ղեկավարի աշխատավարձ	2 100 000 ՀՀ դրամ																
կապի ծառայություններ	3 000 000 ՀՀ դրամ																
գրասենյակային սարքավորումներ և կահույք	3 000 000 ՀՀ դրամ																
գրասենյակային ծախսեր	600 000 ՀՀ դրամ																
տնայցերի հետ կապված ծախսեր	4 800 000 ՀՀ դրամ	(այդ թվում բեռնափոխ 4 000 000 ՀՀ դրամ)															
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	<p>Սույն ծրագրի իրականացման շրջանակներում ՀՕՖ-ը համագործակցում է՝</p> <ol style="list-style-type: none"> 1. ՀՀ կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի 2. ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության, 3. Տեղական ինքնակառավարման մարմինների 4. Հայ Առաքելական Եկեղեցու Արարատյան, Շիրակի, Սյունիքի, Տավուշի և Վիրահայոց թեմերի հետ 															
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	<p>Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակի, ԱՄՆ Արևելյան թեմի Տիկնանց միության և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից եռամսյա և տարեկան հաշվետվությունների միջոցով:</p>															



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1154 -Ա

քաղ. Երևան

**«ԱՐԱՔԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐՈՎ ԵՐԵՒԱՆԵՐԻ
ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի նոյեմբերի 13-ի N 3/3.8-1/17190-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի նոյեմբերի 13-ի N 02/6742-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի նոյեմբերի 8-ի N ԴԴ/22/12440-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի նոյեմբերի 11-ի ՖԲ/ԱՆՄ-4/8495-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի նոյեմբերի 13-ի N ՎՄ/3-4/13941-13 ու Երևանի քաղաքապետի 2013 թվականի նոյեմբերի 20-ի N 02/12-65140-ի եզրակացությունները, **ո Ր Ո Շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «Արաքկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մամիկոնյանց 30, ՀՎՀՀ՝ 00009237) իրականացվող՝ 12,000,000 դրամ արժողությամբ «Հատուկ կարիքներով երեխաների դպրոցական պայմանների բարելավում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Արաքկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝


«Սոնա և Արա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00054623) 2013 թվականի նոյեմբերի 5-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Ա. Շիրվանզադեի անվան թիվ21 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի զանկապատաի կառուցման աշխատանքների իրականացում՝ 8,988,906 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Արաքկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Երևանի քաղաքապետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1155 -Ա
քաղ. Երևան**

**«ՎԱՆԱՃՈՐԻ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՏՈՒՆ» ՀԻՄՆԱՊՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱՆԱՑՎՈՂ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի նոյեմբերի 27-ի N 3.8-1/18148-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի նոյեմբերի 26-ի N 02/7066-13, Հայաստանի Հանրապետության աշխարհային և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի նոյեմբերի 25-ի N ՖՔ/ԱՆՄ-4/8866-13, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի նոյեմբերի 27-ի N ՎՄ/3-4/14740-13 և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2013 թվականի նոյեմբերի 21-ի N 102.1/104.3.2/5972-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է .**

1. Բարեգործական որակել «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից իրականացվող՝ 69,679,300 դրամ արժողությամբ ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից կնքված (քաղ. Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ՝ 06940684)՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն գզալի նշանակություն.

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ -ի «Դեբեդ» մասնաճյուղի հետ (քաղ. Վանաձոր, Բաթումի 8, ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի մարտի 19-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 2,300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԱրմենՏել» ՓԲԸ -ի Լոռու կենտրոնի հետ (քաղ. Վանաձոր, Տիգրան Մեծի 18, ՀՎՀՀ՝ 02500052) 2008 թվականի մարտի 14-ին կնքված N 510100708 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Սպարապետ» ՍՊԸ -ի հետ (քաղ. Վանաձոր, Տիգրան Մեծի 79, ՀՎՀՀ՝ 06915002) 2013 թվականի նոյեմբերի 6-ին կնքված N 13-01 պայմանագրում նշված գործարքը, որով

նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը սննդամթերքների և տնտեսական ապրանքների ձեռքբերում՝ 16,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.


4) «Հայրուսագալար» ՓԲԸ -ի Լոռու ԳԳՄ-ի հետ (քաղ. Վանաձոր, Չուխաջյան 2/2ա, ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի օգոստոսի 1-ին կնքված N 03108134348 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բնական գազի մատակարարում՝ 4,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի

5) «Է Ի Ջի-Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2013 թվականի նոյեմբերի 1-ին կնքված N 4-59 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկում՝ 99,778 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Աուդիտ սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00419022) 2013 թվականի հոկտեմբերի 28-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աուդիտի անցկացում՝ 300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների վերաբերյալ, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկություններ:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից 2014թ-ին իրականացվող ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

1. Ծրագրի նպատակը	Վանաձորի տարեցների տան խնամքի տակ գտնվող միայնակ, սոցիալապես անապահով տարեցների խնամքի կազմակերպում, նրանց սոցիալական պահանջմունքների բավարարում, բժշկական, հոգեբանական օգնության ցուցաբերում:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալում ենք սննդամթերքի, տնտեսական ապրանքների արժեքի, հետախոսակապի, սպառած զազի, զազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման, էլեկտրաէներգիայի և տարեկան աուդիտի գծով մատուցված ծառայությունների դիմաց ԱԱՀ-ից ազատում 01.01.2014թ.-31.12.2014թ. ընթացքում:
3. Բարեգործը	ԱՄՆ-ի Հայ Օգնության Ֆոնդ (Նյու Յորքի գրասենյակ), ամերիկահայ բարերարներ՝ Գեվորգ և Միրվարդ Գարամանուկներ, Շահան Արծրունի
4. Ծրագիրը կատարողը	«Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամ, հասցեն՝ ք. Վանաձոր, Մայրեկի 8, ՀՎՀՀ՝ 06940684
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Մայրեկի 8: Բնագավառը՝ սոցիալական:
6. Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է՝ 69 679 300 ՀՀ դրամ:
7. Բարեգործություն ստացողը	Վանաձորի տարեցների տանը մշտապես բնակվող 55 սոցիալապես անապահով ծերեր:
8. Ծրագրի իրականացման տևողությունը	01.01.2014թ – 31.12.2014թ, ծրագիրը շարունակական է:
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հիմնադրամի խնամքի տակ գտնվող սոցիալապես անապահով տարեցների շուրջօրյա խնամքի կազմակերպում, դրա իրականացման համար նպատակադր պայմանների ստեղծում, տարեցների սոցիալական պահանջմունքների բավարարում, բազմաօնական հետաքրքիր և մշակութային միջոցառումների իրականացում նրանց առօրյա հետաքրքիր դարձնելու համար, հոգեբանական և իրավաբանական օգնության տրամադրում ողջ 2014թ տարվա ընթացքում, որը ներառում է նրանց խնամքի, հիգիենայի, սննդի, հագուստի, առողջապահական, օրվա զբաղմունքի կազմակերպման, շենքի պահպանության, կոմունալ-կենցաղային և այլ տնտեսական, ինչպես նաև խնամող, մասնագիտական, ադմինիստրատիվ և սպասարկող անձնակազմի աշխատավարձերը, այդ թվում՝ 1. Տարեցների տանը բնակվող ծերերի համար նպատակադր պայմանների ստեղծում՝ • Կոմունալ և կապի ծառայության ծախսեր՝ - 7 000 200 ՀՀ դրամ

15/8

	<ul style="list-style-type: none"> • Շենքի շահագործման և պահպանման ծախսեր՝ - 600 000 ՀՀ դրամ <p>2. Տարեցների խնամքի, հիգիենայի կազմակերպում, սոցիալական պահանջմունքների բավարարում, մշակութային միջոցառումների կազմակերպում, հոգեբանական և իրավաբանական օգնության տրամադրում</p> <ul style="list-style-type: none"> • Սննդի, տնտեսական ապրանքների ձեռք բերում - 16 000 000 ՀՀ դրամ • Հագուստի, անկողնային և այլ անհրաժեշտ պարագաների ձեռք բերում - 700 000 ՀՀ դրամ • Տարեցների տունն սպասարկող տրանսպորտային միջոցների շահագործման և սպասարկման ծախսեր - 2 137 200 ՀՀ դրամ • Խնամքի, սոցիալական և հոգեբանական աշխատանքներ (մասնագետների աշխատավարձեր) - 35 525 000 ՀՀ դրամ <p>3. Տարեցների առողջական վիճակի ամբողջական հետազոտությունների կազմակերպում, առաջնային բժշկական օգնության տրամադրում - 400 000 ՀՀ դրամ</p> <p>4. Կազմակերպական ծախսեր - 7 316 900 ՀՀ դրամ</p>
10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	<p>Ակնկալում ենք ներքոհիշյալ կազմակերպությունների կողմից մատակարարված ապրանքների և ծառայությունների գծով ԱԱՀ-ից ազատում</p> <p>1. Օգտագործված զազի դիմաց ԱԱՀ-ից ազատում 4 000 000 ՀՀ դրամի չափով 01.01.2014թ.-31.12.2014թ. ընթացքում /պայմանագիր N 03108134348, կնքված 01.08.2013թ. «ՀայՌուսզագար» ՓԲԸ-ի(Լոռու ԳԳՄ, ք. Վանաձոր, Չուխաչյան 2/2ա, ՀՎՀՀ 00046317) և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի (ՀՀ, ք. Վանաձոր, Մայրեկի 8, ՀՎՀՀ 06940684) միջև:</p> <p>2. Գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման և կարգաբերման աշխատանքների դիմաց ԱԱՀ-ից ազատում 99 778 ՀՀ դրամի չափով 10.01.2014թ.-10.01.2015թ. ընթացքում՝ պայմանագիր N 4-59, կնքված 01.11.2013թ «Էյ-Ի-Ջի-Մերվիս» ՍՊԸ-ի (ՀՀ, ք. Երևան, Արոնցի 10, ՀՎՀՀ 00930884) և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի (ՀՀ, ք. Վանաձոր, Մայրեկի 8, ՀՎՀՀ 06940684) միջև:</p> <p>3. Սննդամթերքի և տնտեսական ապրանքների դիմաց ԱԱՀ-ից ազատում 16 000 000 դրամի չափով 01.01.2014թ.-31.12.2014թ. ընթացքում՝ պայմանագիր N 13-01, կնքված 06.11.2013թ. Սպարապետ» ՍՊԸ-ի(ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 79, ՀՎՀՀ 06915002) և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի (ՀՀ, ք. Վանաձոր, Մայրեկի 8, ՀՎՀՀ 06940684) միջև:</p> <p>4. Օգտագործած էլեկտրաէներգիայի դիմաց ԱԱՀ-ից ազատում 2 300 000 դրամի չափով 01.01.2014թ.-31.12.2014թ. ընթացքում՝ պայմանագիր N 4100004130122004271, կնքված 19.03.2008թ. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի Դեբեդ մասնաճյուղի (ՀՀ, ք. Վանաձոր, Բաթումի 8, ՀՎՀՀ 01520882) և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի (ՀՀ, ք. Վանաձոր, Մայրեկի 8, ՀՎՀՀ 06940684) միջև:</p> <p>5. Հեռախոսակապի ծառայության դիմաց ԱԱՀ-ից ազատում 600 000 ՀՀ դրամի չափով 01.01.2014թ.-31.12.2014թ. ընթացքում՝ պայմանագիր N 510100708, կնքված 14.03.2008թ. «Արմեռուեյ» ՓԲԸ-ի Լոռու կենտրոնի (ՀՀ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 18, ՀՎՀՀ 02500052) և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի (ՀՀ, ք. Վանաձոր, Մայրեկի 8, ՀՎՀՀ 06940684) միջև:</p> <p>6. Աուդիտի ծառայության դիմաց ԱԱՀ-ից ազատում 300 000 ՀՀ դրամի չափով 01.01.2014-31.12.2014թ. ընթացքում՝ պայմանագիր կնքված 28.10.2013թ «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի (ՀՀ, ք.Երեվան, Հանրապետության 78/26, ՀՎՀՀ 00419022) և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի (ՀՀ, ք. Վանաձոր, Մայրեկի 8, ՀՎՀՀ 06940684) միջև:</p> <p>Կից ներկայացվում են պայմանագրերի լուսապատճենները:</p>

15/8

11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի սպասարկման համար ծախսվելու է - 7 316 900 ՀՀ դրամ ՀՀ դրամ, ծրագրի ընդհանուր արժողության 10.5 %-ը: Ծրագրի սպասարկումը ներառում է ծրագրի ադմինիստրատիվ կազմի աշխատողների աշխատանքի վարձատրության ուղղված միջոցները, գործուղման, գրասենյակի համար անհրաժեշտ գրեական պիտույքների ձեռք բերման, համակարգչային սպասարկման, բանկային ծառայության և տարեկան աուդիտի անցկացման հետ կապված ծախսերը:
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով, Լոռու մարզպետարան, Տեղական ինքնակառավարման մարմիններ
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է Ամերիկայի ՇՕՖ-ի Նյու Յորքի և Հայաստանյան գրասենյակի, «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի խորհրդի և եռամսյա, տարեկան հաշվետվությունների միջոցով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1156 -Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ
5-Ի N Մ-218-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱ-
ԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի նոյեմբերի 27-ի N 3/3.8-2/18118-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի նոյեմբերի 26-ի N ՎՄ/3-4/14684-13 եզրակացությունները, **ո թ ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» հիմնադրամի կողմից ձեռք բերված օդափոխության համակարգի սարքավորումները և պարագաները (8 տեղ, 478 կգ ընդհանուր քաշով, 8583 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմել են 729000 դրամ, ՄՃՓ տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 5-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» ծրագրի մասին (3-րդ փուլ)» N Մ-218-Ա որոշմամբ (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-607-Ա և նոյեմբերի 15-ի N Մ-1060-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1157 -Ա
քաղ. Երևան


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ
5-Ի N Մ-218-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՆՆԱԿԱԲԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 1**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի նոյեմբերի 27-ի N 3/3.8-2/18136-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի նոյեմբերի 29-ի N ՎՄ/3-4/14916-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**:

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» հիմնադրամի կողմից ձեռք բերված աուդիո սարքավորումները (9 տեղ, 178 կգ ընդհանուր քաշով, 19422 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, ներառյալ 1540 ԱՄՆ-ի դոլար բեռնափոխադրման ծախսերը, «Ձվարթնոց» մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 5-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» ծրագրի մասին (3-րդ փուլ)» N Մ-218-Ա որոշմամբ (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-607-Ա և նոյեմբերի 15-ի N Մ-1060-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

15/10.29



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ Մ Ա Ր
6 դեկտեմբերի 2013 թվականի N Մ - 1158 - Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1054-Ա ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՈՒ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՄԵԾՆ ՆԵՐՍԵՍ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԿՎԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի նոյեմբերի 20-ի N 3/3.8-2/17700-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի նոյեմբերի 25-ի N ՖԲ/ԱնՄ-4/8869-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի նոյեմբերի 25-ի N ՎՄ/3-4/14630-13 եզրակացությունները, **ո ր ո շ մ ու մ է.**

1. Սահմանել, որ Միացյալ հայկական հիմնադրամի ֆինանսավորմամբ «TOMS» ընկերության կողմից «Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված կոշիկները (3 բեռնարկ, 11070 գույգ, 9888 կգ ընդհանուր քաշով, 132840 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 11171 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն, բեռի բաշխման նախնական ցանկը կցվում է) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2012-2014 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1054-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի մարտի 23-ի N Մ-205-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արմավիրի, Կոտայքի, Վայոց ձորի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱԿ



Ս. ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ

«ՄԵՏՆ ՆԵՐՍԵՍ» ֆրոնտալ կողմից արտադրված օտարալուծիկները, երեք բեռնարկով TRHU 2161404, ECMU 4382212, CMAU 8249041, 9888 կգ ընդհանուր կշռով, 11070 գույգ, 132840 դոլար արժողությամբ 11171 դոլար փոխադրվածով, «Մեծն Ներսես» ԲՀԿ-ի հասցեով ստացվելիք մարդասիրական օգնության բաշխման նախնական ցանկ:


N	Կազմակերպության անվանում	Քանակ (գույգ)
1	«Մեծն Ներսես» ԲՀԿ շահառուներ (Երկրորդամի և միակողմանի ծնողազուրկ երեխաներ և հաշմանդամներ)	1500
2	Նուբարաշենի թիվ 11 (հատուկ) օժանդակ դպրոց	100
3	«Փոքր Միեր» կրթահամալիր	450
4	«Զատիկ» աջակցության կենտրոն	70
5	Երևանի կողմից խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր	100
6	ՀՕՄ (Միջինադար երեխաներ)	300
7	Կենտրոն վարչական շրջանի սոց. բաժին	500
8	Ուրասց լեզվի և գրականության մաս. վեստերանների միություն	200
9	Երևանի թիվ 62 միջն. դպրոց	350
10	Երևանի Ռուսթավելու անվան թիվ 23 միջն դպրոց	70
11	Երևանի թիվ 44 միջն. դպրոց	200
12	Նորթ Մարտաշ վարչական շրջանի սոցիալապես անապահով խավերի	500
13	«Լյուծենիա Լայթ Հարու» բարեգործական հիմնադրամ	60
14	Այգարաց միաբանություն բարեգործական ՀԿ	100
15	Հայկական Կաթմիր Խաչ ընկերություն	100

17	Արմավիրի մարզի Երվանդաշատ գյուղ	140
18	Արմավիրի մարզի Այգեկ գյուղ	100
19	Արագածոտնի մարզի Ջառինջա գյուղ	150
20	Արագածոտնի մարզի Աշնակ գյուղի միջնակարգ դպրոց	200
21	Արագածոտնի մարզի Կարբիի Կ. Թեքեյանի անվան միջն. դպրոց	650
22	Արագածոտնի մարզի Մուղնիի Մ. Աշոբյանի անվան միջն.դպրոց	70
23	Կոտայքի մարզի Ողջաբերդ գյուղի միջն. դպրոց	150
24	Կոտայքի մարզի Հրազդանի Ա. Մռավյանի անվան N 4 միջն. դպրոց	200
25	Կոտայքի մարզի Ջառի Ժ. Սարգսյանի միջն. դպրոց	221
26	Կոտայքի մարզի Աղավնաձոր գյուղի Ջ. Դանիելյանի անվան միջն. դպրոց	220
27	Գեղարքունիկի մարզ Գավառի մանկատուն	80
28	Գեղարքունիկի մարզ Ճամբարակ քաղաքի N1 միջն. դպրոց	200
29	Գեղարքունիկի մարզ Ճամբարակ քաղաքի Ավագ դպրոց	300
30	Շիրակի մարզի Երազգաորս գյուղ	155
31	Լոռու մարզի Ճոճկան գյուղ	120
32	Լոռու մարզի Նեղոց գյուղ	40
33	Լոռու մարզի Շնող գյուղ	100
34	Լոռու մարզի Դսեղ գյուղ	250

15/10.29

35	Լոռու մարզի Առաջադիր գյուղ	50
36	Լոռու մարզի Լորուք գյուղ	180
37	Սյունիքի մարզի Արծվանիկ գյուղ	110
38	Սյունիքի մարզի Դավիթ Բեկ գյուղ	117
39	Սյունիքի մարզի Եղվարդ գյուղ	62
40	Տավուշի մարզի Այգեհովիտ գյուղ	250
41	Տավուշի մարզի Կոթի գյուղ	200
42	Տավուշի մարզի Ոսկեան գյուղ	200
43	Սյունիք քարտեզորձական ՀԿ	500
44	Վայոց Ձորի մարզի Արին գյուղ	70
45	Վայոց Ձորի Խնձորուտ գյուղ	100
46	Վայոց Ձորի Ջառիթափ գյուղ	255
47	Արարատի մարզի Դաշտաքար միջն. դպրոց	130
48	Արարատի մարզի Մխչյանի միջն. դպրոց	500
49	Արարատի մարզի Լանջազատի միջն. դպրոց	100
50	Արարատի մարզի Վարդաշատ գյուղ	150
	ԸՆԴՄԱՆԵՆ	11070

15/10.29





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 դեկտեմբերի 2013 թվականի N Մ - 1159 - Ա
քաղ. երևան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1054-Ա ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՄԵԾՆ ՆԵՐՍԵՍ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ) N 1

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 2-ի N 3/3.8-2/18335-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի նոյեմբերի 29-ի N ՖԲ/ԱՆՄ-4/9062-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի նոյեմբերի 29-ի N ՎՄ/3-4/14910-13 եզրակացությունները, ո Ր Ո Շ ՈՒ Մ է.

1. Սահմանել, որ Միացյալ հայկական հիմնադրամի ֆինանսավորմամբ «TOMS» ընկերության կողմից «Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված կոշիկները (2 բեռնարկ, 11070 զույգ, 132840 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 8360 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2012-2014 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1054-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում: Բեռը հանձնվելու է ԱՄՆ-ի Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղին՝ կազմակերպության շահառուներին բաշխելու նպատակով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Մ Ա Ր

6 դեկտեմբերի 2013 թվականի N Մ - 1160 - Ա

քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-106-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի նոյեմբերի 21-ի N 3/3.8-1/17762-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի նոյեմբերի 25-ի N ՎՄ/3-4/14626 -13 եզրակացությունները, **ո թ ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Շողոտամարաթոն - 2013» ծրագրի մասին» N Մ-106-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

